

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

18.08.2021թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայրը Հասմիկ Ալեքսանյանս, ուսումնասիրելով թիվ 07003660 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Կուրայքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.01.2021թ. տրված թիվ ԿԴ/1770/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Աննա Արարատի Նալբանդյանից հոգուր «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 472.237 ՀՀ դրամ և կատարողական թերթով հաշվարկվող տոկոսագումարներ:

Բռնագանձումը տարածել գրավի պայմանագրով գրավադրված ոսկյա իրերի վրա:

Պահանջարեքը գրությամբ հայտնել է, որ պարտապանի պարտավորությունը 16.08.2021թ կազմում է 675.665 ՀՀ դրամ:

«ՌԱՖՕԼ» ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացության համաձայն գրավի առարկա հանդիսացող 6 կտոր ոսկյա իրերը գնահատվել են 652.820 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28,28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1,35.2,35.3 և 35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Աննա Արարատի Նալբանդյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ ոսկյա իրերը

h/h	Լուրի անվանումը	Քանակը	Հարգ	Գրամ	Գնահատման գին ՀՀ դրամով	Մեկնարկային գինը (75%)ՀՀ դրամով
1	Թանց	1	580	11.7	196.560	147.420
2	Խաչ	1	580	0.9	15.120	11.340
3	Թանց	1	560	12.0	193.200	144.900
4	Թանց	1	560	6.7	107.870	80.902,5
5	Թանց	1	560	5.7	91.770	68.827,5
6	Թանց	1	560	3.0	48.300	36.225

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ <http://harkodir.ajurd.am> միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 06.10.2021թ թվականին:

Որոշումը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ

ՀԱՍՄԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լուրի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լուրի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զեպտելվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լուրի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լուրի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լուրի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լուրի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առավաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լուրի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լուրի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պարկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

« Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լուրը չվաճառվելու դեպքում պահանջարկերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջարկերը պահանջի դիմաց լուրն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լուրը/ պահանջարկորդը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լուրի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: